Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն՝ Ա. Բաղալյան

ՈՒՍ. գծով փոխտնօրեն՝ Ե. Վերոյան

Գեղարքունիքի մարզի

«Վարդենիկի Ա. Օհանյանի անվան № 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

2023 – 2024 ուսումնական տարվա

9Բ դասարանի ղեկավարի

Աշխատանքային տարեկան ծրագիր

Դասղեկ՝ Ն. Կարապետյան

ԴԱՍՂԵԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

(9-րդ Բ)

1.Գիտելիքի, գրի և դպրության օր: Դասարանի ներքին կարգապահական ծրագրի ներկայացում և հաստատում:

2.Տարվա ուսումնադաստիարչական աշխատանքների պլանավորում:ԴԺ պլանավորում:

3.Անվտանգ երթևեկություն ճանապարհատրանսպորտային կանոնների իմացություն և կիրառում:

4.Վաղը հաղթելու է նա, ով վոր միշտ իր հոգու մեջ կտանի հաղթանակ:Անկախության օր:Հայաստանը ես եմ:

5.Բանավեճ, դեռահասություն, տարիքային առանձնահատկությունների քննարկում:Դեռահասության անձնական հիգենիա:

6.Ուսուցիչը հասարակության համար նույն է ինչ որ արևը տիեզերքում: Շնորհավոր տոնդ սիրելի ուսուցիչ:

7.Դասախոսություն. <<ուսումնական ծրագրերը և կրթության բովանդակությունը>> թեամյով: Կարևորել գիտելիքի աստիճանական զարգացումը:

8.Զգացմունք և զգացմունքայինություն, դերը դաստիարակության գործում և մարդու կյանքում:

9.Զրույց. ընտրել դաստիարակության այն ձևերը որոնք նպաստում են առաջադրված այն խնդիրների և նպատակների իրականացմանը:

10.Զրույց. <<Պատասխանատվություն և անպատասխանատվություն: Ինչ է թաքնված այս բառերի հետևում>>:

11.Իմ երկրի պատմությունը, 45 րոպե աշխարհի շուրջ, ամենահետքրքիռ կայքերը, լրագրերը, ամսագրերը: Դեղին մամուլ կեղծ կայքեր:

12.Աշակերտ-դպրոց-ուսուցիչ-ծնող կապի ամրապնդում և գործընկերային համագործակցություն:

13.Էկոլոգիական դաստիարակություն, կյանքի շարունակականություն: Նոբելյան մրցանկի հավակնորդներ:

14.Առողջ ապրելակերպը դարձնել կենսակերպ, այն ընկալել որպես ռազմավարական գործոն:

15.Դասախոսություն.<<Երկիր որը կկառուցեի ես և որտեղ կապրեն իմ երեխաները ազատ և երջանիկ:>>

16.Զեկույց.<<Արդյոք ունեմ տեսլական, ունեմ դիրքորոշում, կարողանում եմ ժամանակը կառավարել:>>

17.Առաջին կիսամյակի ամփոփում, կիսամյակային հաշվետվություն: Միջոցառում <<Դիամակահամդես>>:

1.Բանավեճ <<Դաստիարակչական աշխատանքի վերլուծություն>>: Քննադատաբար մտածելակերպի ձևավորում: ԴԱ արդյունավետությունը:

2.Զրույց. Ուսման նկատմամբ, գիտակցված վերաբերմունքի, կայուն հետաքրքրության, փոխադարձ օգնության վերաբերյալ:

3.Բանակը մեր պետության անվտանգության հիմքն է, նրա մարտունակության բարձրացումը գերագույն նպատակ:

4.Զրույց. Բարձր արդյունքներ գրանցել համադպրոցական, համայնքային և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ:

5Զրույց.Առողջ ապրելակերպի կանոնները: Կարողանալ գնահատել առողջությունը և պահպանել այն:

6.Գնահատել դասարանի վերաբերմունքը առանձին առարկաներին, դասավանդման մեթոդներին:Նպաստել գիտելիքի յուրացմանը:

7.Վարքագծային հարցերի քնարկում, էթիկայի կանոնների հետևում թե տանը, թե դպրոցում, թե փողոցում:

8.Դասախոսություն. Կոլեկտիվը և աշակերտների ինքնակարավարման մեխանիզմը մանկական կոլեկտիվում:

9.Կանանց միջազգային օր. Կանայք մարդկային ցեղի առաջին դաստիարակներն են: Խելացի և հզոր կինը երջանիկ հասարակության առաջամարտիկն է :

10.Կազմել եռակողմ համագործակցություն (դասղեկ-դասավանդող ուսուցիչ-աշակերտ) օգնելու աշակերտներին գիտելիքի բացը լրացնելու նպատակով:

11.Քննարկել դասալսումների ընթացքում ի հայտ եկած բացթողումները, կամքի ուժ դրսեվորել արկա խնդիրները լուծելիս:

12.Կրթության իմաստը ոչ միայն գիտելիք ստանալն է, այլ այն կիրառել տեղին և լիարժեք:

13.Հայերը և հնագույն Հայաստանը:Հայկական լեռնաշխարհը որպես քաղաքակրթության բնօրրան:Մոր դերը այդ ողջ պատմական իրողության մեջ:

14.Բանավեճ. Դեռահասություն, տարիքային առանձնահատկություններ քննարկում:

15.Ավանդական և նոր տեխնոլոգիաների համադրումը դաստիարակության արդյունավետության հարցում:

16.Ստեղծել ինտելեկտուալ խմբեր և կազմակերպել գիտական մրցաշարեր:

17.Զրույց. Ինչ արժեհամակարգ ունեմ ես, ինչպես դրսևորեցի ինձ, արդյոք իմ ողջ ներուժը կիրառեցի և ինչը բաց թողեցի:

18.Կարողականությունների գնահատում

SWOT վերլուծություն:

19.II կիսամյակի ամփոփում.

Տարեկան հաշվետվություն